# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Արևշատ, 093- 09-98-18. 091-77-02-95. arevshat.gp@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 18

### ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ 12.08.2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով՝

Համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Արևշատ համայնքի ավագանու հերթական թիվ 7 նիստի օրակարգը:

1.Արևշատ համայնքի 2020 թվականի բյուջում փոփոխություններ կատարելու մասին:

2. Համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գին սահմանելու մասին :

3. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքերը աճուրդ վաճառքով օտարելու մասին:

4. Հողի հարկի և գույքահարկի արտոնություն տալու մասին

Կողմ 4 Դեմ -0 Ձեռնպահ -0

Գարիկ Կոստանյան

Արմեն Վարդանյան

Վաղարշակ Հովհաննիսյան

Սմբատ Ստեփանյան

Համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ Լ. Պողոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Արևշատ, 093- 09-98-18. 091-77-02-95. arevshat.gp@mail.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 19 Ն**
13 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի

ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝

Համայնքի ավագանին որոշում է.

ելնելով անհրաժեշտությունից կատարել հետևյալ փոփոխությունները.

Վարչական բյուջեի եկամուտները ավելացնել 1487500դրամ 900415002261 հաշվի վրա աշխատավարձների բարձրացման հետ կապված հատկացված ընթացիկ դրամաշնորհի գումարը և նախատեսել ծախս 11.01.02.51 գործառնական դասակարգման 4891 հոդվածի վրա:

Վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 11.01.02.51 գործառնական դասակարգման 4891 հոդվածից պակասեցնել 1557000 հազար դրամ և ավելացնել

09.05.01.51 գործառնական դասակարգման 4511 հոդվածի վրա ավելացնել 105000 դրամ:

01.01.01.51 գործառնական դասակարգման 4112 հոդվածի վրա 750000 դրամ

05.01.01.51 գործառնական դասակարգման 4213 հոդվածի վրա ավելացնել 40000դրամ աղբահանություն կատարելու նպատակով:

10.07.01.54 գործառնական դասակարգման 4726 հոդվածի վրա 300000 դրամ և 4729 հոդվածի վրա 400000 դրամ զինվորների ընտանիքներին աջակցելու նպատակով:

04.05.01.59 գործառնական դասակարգման 4111 հոդվածից պակասեցնել 300000դրամ և 4264 հոդվածից պակասեցնել 200000դրամ և ավելացնել 4213 հոդվածի վրա 500000դրամ աղբահանություն կատարելու նպատակով:

06.04.01.52 գործառնական դասակարգման 5112 հոդվածից պակասեցնել 235000 դրամ և ավելացնել 04.05.01.59 գործառնական դասակարգման 5122 հոդվածի վրա Շահումյան և Աբովյան փողոցների խմելու ջրի խողովակ անցկացնելու համար:

Կողմ 4 | Դեմ -0 | Ձեռնպահ -0

Գարիկ Կոստանյան

Արմեն Վարդանյան

Վաղարշակ Հովհաննիսյան

Սմբատ Ստեփանյան

Համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ Լ. Պողոսյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արևշատ , 093-09-98-17. 091-77-02-95 arevshat.gp@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ 20

13 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի

## ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ ,68-րդ հոդվածների պահանջներով , Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված << Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի >> 5-րդ գլխի պահանջներով.**համայնքի ավագանին որոշում է՝**

Թույլատրել համայնքի ղեկավարին . աճուրդային կարգով օտարել համայնքային սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնքում գտնվող հետևյալ հողամասերը՝

Արևշատ համայնքի 03-021-0118-0012 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0,08591 հա գյուղատնտեսական նշանակության 3-րդ կարգի պտուղ կորիզավոր հողամասը:

Արևշատ համայնքի 03-021-0018-0009 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.08682 հա գյուղատնտեսական նշանակության 3-րդ կարգի պտուղ կորիզավոր հողամասը:

Արևշատ համայնքի 03-021—0018-0010 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.066հա գյուղատնտեսական նշանակության 3-րդ կարգի պտուղ կորիզավոր հողամասը :

Արևշատ համայնքի Թումանյան 70 հասցեում 03-021-0111-0022 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.12054 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը:

Օտարվող հողամասերի մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 200% -ի չափով:

Կողմ 4 Դեմ -0 Ձեռնպահ -0

Գարիկ Կոստանյան

Արմեն Վարդանյան

Վաղարշակ Հովհաննիսյան

Սմբատ Ստեփանյան

Համայնքի ղեկավարի պաշտոնակատար` Լ. Պողոսյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արևշատ 0983-09-98-18. 09177-02-95 arevshat.gp@mail.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 21**

13 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հիմք ընդունելով <<ԱՐՏԿԱՊԻՏԱԼ>> ՍՊԸ-ի կողմից տրված անշարժ գույքերի արժեքի վերաբերյալ եզրակացությունները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, համայնքի ավագանին որոշում է՝*

Թույլատրել համայնքի ղեկավարին աճուրդային կարգով օտարելու համայնքային սեփականություն հանդիսացող հետևյալ գույքերը՝

1. ԶԻԼ ՄՄԶ 4502 մակնիշի ավտոմեքենան 1980թվականի արտադրության
2. Տ-40 մակնիշի տրակտորը 1986թվականի արտադրության
3. Դ-606 մակնիշի տրակտորը 1981 թվականի արտադրության
4. ՉՊՏԱ-4 մակնիշի կցասայլակ 1986թվականի արտադրության և գութան

2. Գույքի օտարման մեկնարկային գինը սահմանել համաձայն աուդիտորական կազմակերպության կողմից տրված գնահատականի

Կողմ -4 Դեմ-0 Ձեռնպահ-0

Գարիկ Կոստանյան

Արմեն Վարդանյան

Վաղարշակ Հովհաննիսյան

Սմբատ Մնեփյան

Համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ Լյուդվիգ Պողոսյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արևշատ 093-09-98-18. 091-77-02-95 arevshat.gp@mail.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ** 22
13 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի

ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ՔԱՆԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ՄԱՍՈՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի և <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով, և Հայաստանի հանրապետության կառավարության 2012թվականի հունիսի 22-ի թիվ-822-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետով և հիմք ընդունելով որոշ հարկատուների դիմումները համայնքի ավագանին*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Արևշատ համայնքի մի քանի սեփականատերերի տրամադրել գույքահարկի և հողի հարկի արտոնություն համաձայն /հավելված 1-ի/:

Կողմ-4 Դեմ-0 Ձեռնպահ -0

Գարիկ Կոստանյան

Վաղարշակ Հովհաննիսյան

Արմեն Վարդանյան

Սմբատ Ստեփանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼՅՈՒԴՎԻԳ ՊՈՂՈՍՅԱՆ

Հավելված 1

Արևշատ համայնքի ավագանու 2020թվականի

Օգոստոսի 13-ի թիվ- 22 որոշման

| N | ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ | ՀՈՂԻ ՀԱՐԿ | ԳՈՒՅՔԱՀԱՐԿ | |
|---|---|---|---|---|
| 1 | Խաչատուր Ավետիսյան | 60000 | | |
| 2 | Արարատ Նիկողոսյան | 39000 | | |
| 3 | Արփիկ Օհանյան | 20000 | 87000 | |
| 4 | Գոզոլ Նիկոլյան | 9000 | 7000 | |
| 5 | Ռոզա Ալոյան | | 9000 | |
| 6 | Արեգնազ Ռուստոմյան | 44500 | | |
| 7 | Արծրուն Հարությունյան | 50000 | | |
| | Ընդամենը | 222500 | 103000 | |

Աշխատակազմի քարտուղար՝ Է. Փորթուգալյան